կանթեղ, կախվել է կաթողիկե եկեղեցու կենտրոնում, իսկ մյուսը, որ ունեցել է 40 կանթեղ, կախվել է Աստվածածին և Ամենափրկիչ եկեղեցիների հնագույն գավթում, որ հետո քանդվել է, և նրա բռնած տարածությունը վրա երկու գավիթներ են շինվել՝ ամեն մի եկեղեցու համար առանձին։

Այդ ջահերի ձևի և նյութի մասին ոչինչ չգիտենք։ Նույնիսկ հայտնի չէ, թե երբ են նրանք անհետացել վանքից, բայց այդ ջահերը վանքին նվիրելու վերաբերյալ արքայական հրովարտակում, որ պահպանվել է դարձյալ Սանահնի «Քոթուկի» մեջ, ասված է, որ ջահերի մեջ ձեթ է այրվել, և մեծ ջահը նմանեցրած է արևի, որ ծիրանի գույն ունի։ Դրանից պետք է եզրակացնել, որ այդ ջահերը ոսկեփայլ պղնձից են եղել շինված, հավանաբար նման այն ջահին, որ հայտնաբերվել է Անիի ղվարթնոցատիպ գագկաշեն եկեղեցու պեղումների ժամանակ։



Նկ. 21. Սարգսի խաչքարը մեծ ժամատան սմ պատին հենած։